*սերն ավելի հին են և սրբատաշ քարերով, վերին մասերը շինված են ճեղքված քարերով։ Պատերի մեջ օգտագործվել են հին խաչքարեր։ Հարավային պատի արևմտյան անկյունի մոտ կանգնած մի հին և պարզ խաչքարի վրա կա մի թերի արձանագրություն (№ 1057)։*

*Եկեղեցուց քիչ հեռու, կիսավեր վիճակում երեում են մատուռ-դամբարանի ավերակները։*

**1054.** ***ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ,*** *որը դրված է եղել երկաթղծի տակ.*

Թվին :ՉԻ: (1271). յանուն Այ. ես Հայրապետ · · · ւա · · · եղբայր իւր · · կանգնեցաք զխաչս յիշատակ հաւր մերոյ Խոռենայ. մաւր մերոյ Շաղակկոյ ու
եղբաւր մերոյ Խայոմբեկեայ: Ով զայս գիրս կարդայ · · · · · :

*Հրատ. Բարխուդարեանց, 307։*

**1055.** ***ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ,*** *որը դրված է եղել երկաթգծի տակ, նախորդի մոտ.*

Թվ. ՋԼ.: (1481). յանուն Այ. Ես Սասնայս կանգնեցի զխաչս ի տէրութեան Ժամանակի իմոյ յիշատակ ինձ և ծնողաց իմոց և ամուսնոյն իմոյ Սիրունկայ և որդւոյ իմ Սարգիսայ և դստերն իմոյ Մամախաթունայ, Նփաղիաճայ, եղբաւրն Սիրունիկայ. կանգնեցաւ խաչս բարեխաւսութեան հոգոց մերոց: Ով
կարդայ այս Դաւիթս յիշեսցէ առ Աստուած. ջրհեց · · · · · ·

*Հրատ. Բարխուդարեանց, 307։*

**1056.** ***ՓԱՌԻՍՈՍԻ ՎԱՆՔԻ*** *մատուռի մուտքին որպես բարավոր օգտագործած խաչքարի թևերի շուրջը.*

:ՆԽԳ: (994) Մուսէս երէց

Ծանոթ. *Առնում ենք Լալայանից. Բարխուդարյանցը թվականը չունի։*

*Հրատ. Բարխուդարեանց, 306։ Լալայան, V, 340։*

**1057.** ***Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍԻ*** *հարավային պատի տակ կանգնած խաչքարի վրա տող.*

ԻԹՎՆՃԵ
Ե ՍՎԱ· · ·

Ի ԹՎԻՆ :ՇԾԵ: (1106). ԵՍ ՎԱՐԴԱՆ · · · · · · :

*Հրատ. Բարխուդարեանց, 308։*
Լուսանկ. 136.

**1058.** ***ՆՈՒՅՆՏԵՂ,*** *այլ խաչքարի վրա.*

Թվին :ՋԻ: (1471):

*Հրատ. Բարխուդարեանց, 308։*

## 108. ՓՈՔՐ ՈՒ ՄԵԾ ՂԱՐԱՄՈՒՐԱՏ ԳՅՈՒՂԵՐ ԵՎ ԽԱՄՇԻ ՎԱՆՔ

*Այս բնակավայրերը գտնվում են Սևանի ավազանից դեպի Կուր գետի հովիտը տանող հին ճանապարհի վրա։ Այդ ճանապարհին կան մի քանի ավերակ գյուղատեղեր, իսկ եզրերին հաստատուն պատվանդանների վրա դեռևս կանգուն են մեծ խաչքարեր՝ սահմանախաչեր կամ ճանապարհի խաչեր։ Դրանցից մեկը կանգնած է սրանոցի երեք իրար վրա դրված քարերից կազմված պատվանդանին, գտնվում է Բաշքենդ գյուղից երկու կիլոմետր դեպի ցած։*

Այդ հին ճանապարհը ներկայումս էլ բանուկ է, այն սկսվում է Կարմիրի շրջանային կենտրոնից, Բաշքենդ գյուղի մոտով իջնում Գեղամչայ գետի ափը և հասնում Ղարամուրատ շեն և ավերակ գյուղատեղերը։ Ճանապարհը հենց այդ վայրից բաժանվել է երկու գծի. մեկը թեքվելով աջ հասել է Փառիսոս քաղաքն ու բերդը, իսկ մյուսը՝ շարունակվելով հասել է Կուրի ափերը։

Ա. Փոքր Ղարամուրատը ներկայումս ադրբեջանցիներով բնակեցված փոքր գյուղ է, որի արևելյան եզրին մնում են եկեղեցու հիմնապատերը. շուրջը գերեզմանատան մնացորդներ։

Բ. Մեծ Ղարամուրատն անմարդաբնակ է։ Հիշատակված երկու եկեղեցիներն ու անապատը կիսավեր են, որոնց երեսպատման քարերի մեծ մասը տարել են, որի պատճառով արձանագրությունները ոչնչացվել են։ Տեղում հավաքած արձանագրությունները վերցրել ենք ջարդոտված խաչքարերի վրայից։ Մեծերն արտագրում ենք Բարխուդարյանցից։

Գ. Խամշի վանքը կառուցվել է Մեծ Ղարամուրատի հուշարձաններից ոչ շատ հեռու. այն ներկայումս մյուսների վիճակումն է. ըստ Կիրակոս Գանձակեցու հաղորդման, XIII դարի սկզբներում Աղվանից կաթողիկոս Յովհաննեսն այստեղ եկեղեցի է շինել և դարձրել կաթողիկոսանիստ, որին հաջորդած Ներսեսը ևս այստեղ է նստել[1]։

**1059. ԽԱՉՔԱՐԻ ՎԵՐԻՆ ՄԱՍ**, *ագուցված է մեծ եկեղեցու բեմի պատին. քիվին և խորանի շուրջը 2 տող.*




ՄԲ. Խ⌊Ա⌋ՉՍ ԲԱՐ⌊ԷԽԱԻՍ⌋ ԽԱԹՈՒՆԻՆ։ Թ⌊Վ⌋ԻՆ⌋ ։ՌԿԷ։ (1618)։

**1060. ԽԱՉՔԱՐ**, *ագուցված է բեմի պատուհանին որպես ծածկ. քիվը ծածկված է, խորանի շուրջը ուսուցիկ տառերով՝*




. . . . . . Ա ԿԱՉՄՈՂ

**1061. ԽԱՉՔԱՐ**, *մեծ, ագուցված է արևմտյան պատի մեջ, քիվին և թևերի շուրջը երեք տողերի մնացորդներ.*




ՄԲ. ⌈ԽԱՉՍ⌉ ԱՄԻՐԻՆ.| : . . . . | . . |:

**1062. ԽԱՉՔԱՐ**, *ագուցված է արևմտյան պատի հյուսիսային անկյունում, քիվին մեկ տողի մնացորդ.*

ՄԲԽՆՍԲՐԽՍԿՄ· · ·'·    ՄԲ. Խ⌊Ա⌋ՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ ԿԱՐ⌈ԱՊԵՏԻՆ⌉։

---

[1] Կ. Գանձակեցի, *Երևան, 1961, էջ 182, 201, 240, 241,*

*1063.* ***ԽԱՉՔԱՐ***, *փոքր, ագուցված է ավանդատան խորշի մեջ, մնացել է երեք տառ*

. . . . ԳՐԻ . . . .      . . . . ԳՐԻԳՈՐ . . . . .

*1064.* ***ՄԵԾ ԵԿԵՂԵՑՈՒ*** *(Ամենափրկիչ) հարավարևելյան ավանդատան ճակատին.*

Շինեցաւ սբ. տաճարս ձեռամբ անարժան Ջուղայեցի ուստայ Մուսէսին, որդի Եսկարին, զաւակ Սողոմոնին՝ հրամանաւ Փիլիպոս կաթողիկոսին եկի շինեցի սբ. եկեղեցիս Գառամուրացին, հայոց թվին ՌՁԳ: (1634). ով որ կարդաք, ողորմի տաէք Մուսէսին. յիշեցէք ի տէր. Աստուած ձեզ յիշէ. ամէն:

*Հրատ. Բարխուդարեանց, 309։ Լալաեան, V, 326։*

*1065.* ***ՄԵԾ ԵԿԵՂԵՑՈՒ*** *(Ամենափրկիչ) հյուսիսարևելյան ավանդատան ճակատին.*

Շնորհիւն Քի. շինեցաւ սբ. Ամենափրկիչս ի ժամանակս շահ Սլայփլիյն, թվին ՌՁԴ: (1635) էր. յիշեցէք Զաքարէն և կողակիցն Խաթունջան և մայրն Սառիկն և հայրն Վելիճանն և որդին Գառամուրասն, Ղուկասն և դուստրն իւր Գուլաղէն. Զաքարի հայրն Վելիճանն, կողակիցն իւր Գուլդանէն, որդին իւր Ադամն, Հլայխլայգլայյրն, Ովանէսն. յիշեցէք և Աստուած ողորմի տացէ:

Ծանոթ. *Բարխուդարյանցն սկզբի տողերը չունի, իսկ Ադամ անվան փոխարեն՝ Աջամ։*

*Հրատ. Բարխուդարեանց, 309։ Լալաեան, V, 326։*

*1066.* ***ՄԵԾ ԵԿԵՂԵՑՈՒ*** *հյուսիսարևելյան ավանդատան ճակատին, նախորդից ներքև.*

Սուրբ սեղանիս Քարն յիշատակ է Ըռըստամին, իւր եղբայր Էվազին, Պարոնին, իւրենց մայր Խաթունին. թվ. ՌՁԴ: (1635):

*Հրատ. Բարխուդարեանց, 309։ Լալաեան, V, 326։*

*1067.* ***ՓՈՔՐ ԵԿԵՂԵՑՈՒ*** *մուտքի ճակատին.*

Շնորհիւ Աստուծոյ ես Ովանէս վարդապետս, որդի Ապաշխարողի շինեցի զեկեղեցիս արդեամբք և զոյիւք ամենայն քրիստոնէից. յիշատակ ինձ և ծնողացն իմոց և ամենայն աշխատողաց, ի ամայրապետութեան անապաստի Թագուհւոյն և Կայինային. ի ՌՃԾ: (1701) թվ:

*Հրատ. Բարխուդարեանց, 309։ Լալաեան, V, 326—327։*

*1068.* ***ԱՆԱՊԱՏԻ ՄՈՏ***՝ *մի սյան վրա.*

Սուրբ Սարգիս.

*Հրատ. Բարխուդարեանց, 309։ Լալաեան, V, 327։*

*1069. ԹԵՎԱՎՈՐ ԽԱՉ, գեղաքանդակ, կանգնած է եղել զանգակատան գետնահարկում, այժմ գտնվում է Էջմիածնի վանքում, վերին և ստորին մասերում 2 տող.*

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ԹՎԻՆ ։ՌՁԹ։ (1640)։

*Հրատ. Բարխուդարեանց, 310։ Լալաեան, V, 347։*

*1070. ԽԱՄՇԻ ՎԱՆՔ. եկեղեցու մուտքի բարավորին, եղծված.*

Սուրբ խաչս Մար · · · ·

*Հրատ. Բարխուդարեանց, 310։*

*1071. ԽԱՄՇԻ ՎԱՆՔ, նախորդի հյուսիսային կողմում.*

Սուրբ խաչս Ամիրխանին։

*Հրատ. Բարխուդարեանց, 310։*